

ԱԼԻՆԱ ԳԱԼՍՏՅԱՆ

*Երևանի պետական համալսարանի
անձի և մասնագիտական գործունեության
հոգեբանության գ/հ լաբորատորիայի գիտաշխատող*

**ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՂԵՎՈՐ-ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Հոդվածում ներկայացված է հոգեբանական անվտանգության հիմնախնդիրը՝ ըստ անձի ապահովության օբյեկտիվ և սուբյեկտիվ բաղադրիչների: Ապահովությունը դիտարկում ենք որպես վտանգի, արտակարգ իրավիճակի բացակայություն, ինչը հնարավոր է ձեռք բերել արտաքին վստահելի միջավայրի և ներքին հարմարավետության զգացողության փոխապայմանավորվածությամբ: Հոդվածում ընդգրկված են տարբեր փոխադրամիջոցներում ուղևորների անվտանգության և ապահովության հարցաթերթային գնահատման հետազոտական ցուցանիշներ, որոնք մեկնաբանվում են այլ ուղևորներին, վարորդներին և տեխմիջոցներին վստահելու, ինչպես նաև մատչելի տեղեկատվություն ստանալու տեսանկյունից:

Հիմնաբառեր. հոգեբանական անվտանգություն, անձի ապահովություն, վտանգ, արտակարգ իրավիճակ, տրանսպորտային միջոց:

Հոգեբանական անվտանգության հիմնախնդրի շրջանականերում կարևորվում է անձի ապահովության օբյեկտիվ և սուբյեկտիվ բաղադրիչների ուսումնասիրումը կենսագործունեության տարբեր ոլորտներում: Ընդհանուր առմամբ ապահովությունը դիտարկում ենք որպես վտանգի կամ սպառնալիքի բացակայություն, որը հնարավոր է ձեռք բերել արտաքին վստահելի միջավայրի և ներքին հարմարավետության զգացողության փոխապայմանավորվածությամբ: Որպես ապահովության օբյեկտիվ երաշխիք, գլոբալ առումով, կարելի է հիմնավորել պետության տնտեսական աճի և կյանքի որակի ցուցանիշների արտահայտվածությունը, իսկ որպես սուբյեկտիվ՝ մարդու հանդուրժողականության և վստահելիության բաղադրիչների առկայությունը կենսագործունեության տարբեր ոլորտներում:

Հոգեբանական անվտանգության և ապահովության համատեքստում ապահովության օբյեկտիվության բաղադրիչը ընդգրկում է լայն մասշտաբներ. բնակչության անվտանգություն, երկրի պաշտպանվածություն հնարավոր սպառնալիքներից, առողջապահական և բնապահպանական խնդիրների լուծման պետական քաղաքականություն և այլ: Այս առումով, անվտանգությունը և ապահովությունը դիտարկում են անձի՝ որպես հա-

սարակության անդամի, ազգային անվտանգության ընդհանուր տեսակարգի ընդլայնված բաղադրիչներ [3]: Մինչդեռ հոգեբանական տեսանկյունից առավել հասանելի են անձի ապահովության սուբյեկտիվ բաղադրիչները, որոնք ձևավորվում են սոցիալացման արդյունքում, փոփոխվող հասարակարգին հարմարվելու պայմաններում: Անձի անվտանգությունը և ապահովությունը ներկայացվում է նաև «հոգեկան առողջություն» և «վտանգ» հասկացությունների մեկնաբանմամբ, երբ այն դիտարկվում է որպես հոգեկանի ապահով զարգացման վիճակ [2, էջ 354]:

Անձի հոգեբանական անվտանգության և ապահովության դրսևորումները ձևավորվում են միջավայրում՝ անմիջականորեն առնչվելով շրջապատողների տեսակետների, հայացքների, մոտեցումների և վերաբերմունքի հետ, և, որպես ընդհանրական ցուցանիշ, անվտանգության հիմնական բաղադրիչները առաջնահերթ հանդիսանում են ընտանիքը, աշխատանքը, ընկերները, որոնց հաջորդում են հասարակությունը, տեղեկատվությունը և այլ [1, 271-272]: Միջավայրին հարմարման գործընթացում որքան նվազում է վստահելիության մակարդակը, այնքան սահմանափակվում են մարդու հասարակական ակտիվությունը և միջանձնային փոխհարաբերությունների շրջանակները [8]: Սակայն, անձն իր կենսագործունեության ընթացքում ակամա հայտնվում է տարբեր պայմաններում և իրադրություններում, որոնցից անհնար է գերծ մնալ: Ասվածը հատկանշական է ճանապարհային փոխադրամիջոցներից օգտվելու անխուսափելիությանը, որում մարդու՝ որպես ուղևորի, ապահովությունը անմիջականորեն առնչվում է ինչպես փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի, այնպես էլ վարորդների պատրաստվածության հետ, ինչպես նաև այլ ուղևորներին ու ընդհանուր ճանապարհային երթևեկությանը վստահելու հետ: Ընդ որում՝ «վստահությունը», վերաբերում է մարդկային այն փոխհարաբերություններին, որոնց հիմքում ընկած են բարոյականությանը և ոգեղենությանը պայմանավորված անձնային համոզմունքները, ակնկալիքները, միջանձնային գործունեության սկզբունքներն ու օրինաչափությունները [3,4]: Կարելի է ճանապարհային փոխադրամիջոցներում հոգեբանական անվտանգության և ապահովության մասին խոսել, եթե առկա է վստահությունը, սակայն ոչ միշտ է վստահությունն ավելանում, եթե կատարվում են բարեփոխումներ: Օրինակ՝ կարո՞ղ էարդյոք փոխվել վստահության ցուցանիշը, եթե փոխադրամիջոցը առավել հարմարավետ է, կամ, օրինակ, նվազել է վճարման չափը: Եթե ասվածը տեղափոխենք օդային տրասպորտին, ապա կատարված հետազոտությունները հավաստում են, որ էական փոփոխություններ չեն կարող լինել [6, էջ 97]: Սակայն փոխադրամիջոցներում առկա տեղեկատվության բավարար քանակը,

ձայնային ազդանշանները, հրահանգները, վթարային ելքերի առկայությունը, իմացությունը և այլ գործոններ, կարող են վստահություն և ապահովություն առաջացնել ուղևորների շրջանում: Եվ եթե փոխադրամիջոցների պատասխանատուներն ունենան հետադարձ կապ, այսինքն՝ տեղյակ լինեն փոխադրամիջոցներից օգտվողների դժգոհությունների և բողոքների մասին, ապա այն պետք է ծառայի ի նպաստ, այլ ոչ թե ստեղծի լրացուցիչ անջրպետ՝ հսկողության շնորհիվ [6, էջ 381]:

Վերջին տարիներին մեր կողմից կատարվող հետազոտություններն ուղղված էին ճանապարհային փոխադրամիջոցներում ուղևորի հոգեբանական անվտանգության ուսումնասիրմանը: Հետազոտվել էին ուղևորների կողմից փոխադրամիջոցների նախընտրության, վտանգի զգացողության հետ կապված մի շարք օրինաչափություններ, որոնք վկայում են փոխադրամիջոցների տեխնիկական վիճակների, հաճախ հանդիպող վթարային իրադրությունների, վարորդների պատրաստվածության, հավանական վտանգների և այլի մասին [3, էջ 482-486]:

Մեր կողմից իրականացվող աշխատանքների այս փուլում ուսումնասիրվում են հասարակական տրասնպորտի և վարորդի հանդեպ վստահության, փոխադրամիջոցներում անվտանգությանը նպաստող լրացուցիչ միջոցների հագեցվածության և ուղևորների ապահովության գործոնների վերաբերյալ ցուցանիշները: Հետազոտություններն ընդգրկել են «Ճանապարհային փոխադրամիջոցի ուղևորի հարցաթերթիկի» այն տվյալները, որոնք վերաբերում են ապահովությանը: Մասնավորապես ասանձացվել են ուղևորների նստեցման/իջեցման, տեղափոխման և այն միջոցառումների ցուցահիշները, որոնք կապված են ապահովության ձեռքբերման հետ. տեղեկացման համակարգ, անվտանգության կանոնների հրահանգավորում, հասարակական փոխադրամիջոցների տեխնիկական պատրաստվածություն, վարորդների պատրաստվածություն, պատահարների և վտանգավոր իրավիճակների վերաբերյալ հրահանգավորում և հսկողության համակարգի մշակում և այլ: Ուսումնասիրվել է նաև անվտանգության ապահովման միջոցների և միջոցառումների հագեցվածությունը (պատահարներ, դեղարկղ, կրակմարիչ, օդափոխության ավտոմատ համակարգ և այլ) հասարակական տարբեր փոխադրամիջոցներում:

Հասարակական փոխադրամիջոցների ապահովության հանդեպ ձևավորվող մարդու սուբյեկտիվ ընկալման հիմքում ընկած է իրավիճակի օբյեկտիվ նկարագիրը, որով պայմանավորված ձևավորվում է անձի վարքը և գնահատականը տվյալ իրադրությանը [5]: Հոգեբանական տեսանկյունից նպատակային է մեր կողմից ստացված հետազոտական արդյունքները մեկնաբանել «ուղևորի անձ-իրավիճակ» փոխներգործության համատեքստում: Հասարակական փոխադրամիջոցներում ապահովությանը

վերաբերող հարցադրումներում գերակայող դեր են ունեցել այն պատասխանները, որոնք ուղեկցվել են «երբեմն» և «կախված իրավիճակից» տարբերակներով:

Ուղևորի անվտանգության ցուցանիշն ունի շատ թույլ արտահայտվածություն: Հարցվողների միայն 17,33% -ն է գնահատել «լիովին ապահովություն», 4%-ը՝ «անապահովություն», իսկ հիմնական մասը՝ 77.98%-ը, «կախված իրավիճակից» տարբերակը: Բնականաբար, եթե անվտանգություն հասկացությունը դիտարկում ենք ոչ միայն որպես զգացողություն, այլ որպես սոցիալ-տնտեսական միջավայրային բաղադրիչ, ապա կարևորում ենք անձի՝ որպես քաղաքացու և որպես հասարակության անդամի, պահանջմունքների բավարարման նախադրյալների ապահովումը, որն էլ ձևավորելու է ապագայի հանդեպ վստահությունը [7]:

Հոգեբանական անվտանգությունն անձի մակարդակում կապվում է մարդու ապահովության և վստահության զգացողության հետ, ինչի հիմքը կազմում են դժվար իրավիճակներին հակազդման ներուժը, սեփական անձի պատկերացումները ապագայի հանդեպ: Բնականաբար, վստահության զգացողությունը ուղեկցվում է նաև պաշտպանված լինելու հետ, որը ակնկալվում է շրջակա միջավայրից: Ելնելով մեր երկրում տիրող սոցիալ տնտեսական իրավիճակից և ճանապարհատրանսպորտային ներկա բարեփոփոխումներից, ենթադրում ենք, որ ստացված ցուցանիշները համահունչ են և ունեն իրենց հստակ մեկնաբանությունները:

Նշենք, որ հարցաթերթում ընդգրկված հարցադրումները հնարավորություն են տալիս ուղևորի ապահովության հիմնախնդիրը դիտարկել վստահության տեսանկյունից: Նպատակահարմար ենք գտել ստացված տվյալները խմբավորել ըստ երեք բաղադրիչների՝

- վստահություն վարորդի մակարդակում,
- վստահություն տեխնիկական միջոցների մակարդակում,
- վստահություն այլ ուղևորների և ճանապարհային երթևեկության այլ մասնակիցների մակարդակում:

Ըստ առաջին բաղադրիչի՝ վստահություն վարորդի մակարդակում, գնահատվել է վարորդի որակավորումը, աշխատանքային փորձառությունը, մասնագիտական վարքը և կողմնորոշման ռեակցիայի արագությունը: Ինչ վերաբերում է վստահությանը տեխնիկական միջոցների մակարդակում, կարևորվել են ճանապարհային փոխադրամիջոցների վերանորոգման տեխնիկական ծառայությունները, տեխնիկական միջոցների որակը արտադրողից, ընթացիկ վիճակը և փոխադրամիջոցների մաշվածության աստիճանը: Հարցաթերթում հաշվի է առնվել նաև այն բաղադրիչը, որը կապված է երթևեկության այլ մասնակիցների հանդեպ վստահության

հետ: Այն վերաբերում է երթևեկությունը սպասարկող անձնակազմի աշխատակիցների և այլ ուղևորների հանդեպ ձևավորված վստահությանը:

Ներկայացնենք հետազոտական այն տվյալները, որոնք մշակվել են ուղևորի անձի հոգեբանական անվտանգության և ապահովության համատեքստում՝ կապված վստայության բաղադրիչների հետ: Հարցվողների 43%-ն ունի վստահություն վարորդի որակավորման, իսկ 32%-ը՝ վարորդի ռեակցիայի արագության հանդեպ: Հետազոտական տվյալներում գերակայությունը ընկած է «երբեմն» տարբերակի ընտրության վրա. վարորդի ռեակցիայի արագության - 51%, իսկ որակավորումը՝ 31%: Նշենք նաև, որ հարցվողների 17%-ը թերահավատ են վերաբերվել վարորդի որակավորմանը, 11%-ը՝ ռեակցիայի արագությանը:

Վստահությանը տեխնիկական միջոցների մակարդակում ներկայացված է երեք տեսանկյուններով. տեխնիկական միջոցների ընթացիկ վիճակը, տեխնիկական որակը՝ արտադրողից, վերանորոգման ծառայությունները: Շատ թույլ ցուցանիշներ են գրանցվել «լիովին վստահելու» և «բոլորովին չվստահելու» տարբերակների համար: Տեխնիկական միջոցների որակին վստահել են հարցվողների 28%-ը, տեխնիկական ծառայությունների մատուցմանը՝ 15%-ը, իսկ փոխադրամիջոցների ընթացիկ տեխնիկական վիճակին՝ 9%-ը: Բարձր ցուցանիշներ են գրանցվել տեխնիկական միջոցներին վստահելու «երբեմն» տարբերակի համար: Բոլոր բաղադրիչների համար այն գերազանցում է 40%-ը: Ապահովության տեսանկյունից ոչ հուսադրող ցուցանիշ է գրանցվել «չեմ վստահում» տարբերակի համար. Տեխնիկական միջոցների ընթացիկ վիճակի համար՝ 37%, ըստ արտադրության որակի համար՝ 21%, և տեխնիկական ծառայությունների մատուցման և վերանորոգման համար՝ 28%:

Ընդհանուր առմամբ վստահության ցուցանիշները տարբեր մակարդակներում ունեն միանման պատկերներ, ինչից դուրս չի մնում նաև հասարակական տրանսպորտի ուղևորի՝ այլ մարդկանց հանդեպ վստահության գնահատումը: Ինչպես արդեն նշել ենք, հարցաթերթն ընդգրկել է վստահության երկու բաղադրիչ. անվտանգության կանոնների պահպանում այլ ուղևորների և երթևեկությունը սպասարկող անձնակազմի աշխատակիցների կողմից: Վստահության երկու բաղադրիչների համար նվազագույն ցուցանիշ է գրանցվել «լիովին վստահում եմ» տարբերակում (1%), իսկ «վստահում եմ» տարբերակում, համապատասխանաբար այլ ուղևորների համար՝ 12%, սպասարկող անձնակազմի համար՝ 18%: Արտահայտված ցուցանիշն այս մակարդակում ևս «երբեմն» տարբերակի համար է նշվել (համապատասխանաբար 43% և 48%): Նշենք, որ այլ մարդկանց վստահելու մակարդակում «չեմ վստահում» և «բոլորովին չեմ վստահում»

տարբերակների համար գրանցվել են համեմատաբար բարձր ցուցանիշներ. այլ ուղևորների հանդեպ վստահություն՝ 28% և սպասարկող անձնակազմի հանդեպ՝ 26%:

Ճանապարհային փոխադրամիջոցի հարցաթերթի «ապահովության» բաժնի հետազոտական արդյունքներում ընդգրկվել նաև այնպիսի հարցադրումներ, որոնք դուրս են բերում հասարակական տարբեր փոխադրամիջոցներում անվտանգության ապահովման միջոցների հազեցվածությունը: Դա վերաբերում է նախազգուշացնող պաստառների, հրահանգների, առաջին օգնության դեղարկղի, կրակմարիչի, ծխահեռացման համակարգի, վթարային ելքերի, օդափոխության ավտոմատ համակարգի և փրկարարական միջոցների առկայությանը: Բարձր ցուցանիշները գրանցվել են մետրոյի, ավտոբուսի և օդանավի համար: Ընդ որում՝ հրահանգների հստակության, փրկարարական միջոցների մասին ճշգրիտ տեղեկատվության մատուցման և անվտանգություն ապահովող տարբեր միջոցների նշանակության մատչելիության մակարդակով օդանավը էապես տարբերվում է, քանի որ վթարային իրավիճակի վնասը և ռիսկի գործոնը չափելիության այլ մակարդակ ունեն մյուս փոխադրամիջոցների համեմատ:

Ստացված ելքային և ամփոփիչ տվյալները հանգեցնում են այն եզրակացության, որ ճանապարհային փոխադրամիջոցներում ուղևորի անձի հոգեբանական անվտանգությունն իր մեջ կրում է իրավիճակային գործոն, ուղևորը ապահովության զգացողություն և վստահություն է ունենում իրադրությունից կախված: Հակասական է այն ցուցանիշը, որ ուղևորների մի մասը, չվստահելով վարորդի որակավորմանը, վստահում են ռեակցիայի արագությանը երթևեկության ընթացքում: Ինչ վերաբերում է տեղեկացվածության հազեցվածությանը ճանապարհային փոխադրամիջոցներում, այն կարծում ենք պետք է լինի անհրաժեշտ պայման, քանի որ ժամանակակից մարդը ապրում և զարգանում է տեղեկատվական մեծ հոսքի ազդեցության ներքո և այն պետք է հնարավորինս լինի հստակ ու նպատակաուղղված:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. **Չախարյան Ա.Ս.**, Անձի հոգեբանական անվտանգության համակարգային վերլուծություն / «Հանրային կառավարում» գիտական հանդես, միջբուհական գիտաժողովի նյութեր, 2014, էջ 271-276:

2. **Սարգսյան Դ.Յու.**, Անձի հոգեբանական անվտանգության հիմնախնդրի ուսումնասիրության տարբեր մոտեցումներում / «Հանրային կառավարում» գիտական հանդես, միջբուհական գիտաժողովի նյութեր, 2014, էջ 353-358:

3. **Աгузумцяи Р.В., Папоян В.Р., Мурадян Е.Б., Галстян А.С.**, Психологическая безопасность пользователей транспорта / Актуальные проблемы психологии труда, инженерной психологии и эргономики. Выпуск 7 / Под ред. А.А. Обознова, А.Л. Журавлева. – М.: Изд-во “Институт психологии РАН”, 2015. – 520., с. 478-487.:

4. **Акимова А.Ю.**, Представления водителей о доверии и недоверии автомобилю./ Актуальные проблемы психологии труда, инженерной психологии и эргономики. Выпуск 6. / под ред. А.А. Обознова, А.Л. Журавлева. – М.: Изд-во “Институт психологии РАН”, 2014. – 528с., с. 140-160,

5. **Бурлачук Л.Ф., Е.Ю. Коржова.**, Психология жизненных ситуаций. Учебное пособие. М.: Российское педагогическое агентство, 1998. - 263 с.

6. **Купрейченко А.Б.**, Психология доверия и недоверия. М.: Изд-во “Институт психологии РАН”, 2008. 564с.

7. Проблемы психологической безопасности / отв.ред. Журавлев А.Л., Тарабрина Н.В. Изд-во ИП РАН, М., 2012. 440с.

8. **Полюшкевич О. А.**, Представления о социальной защищенности жителей россии и португалии <http://ecsocman.hse.ru/data/2013/04/04/1251448447/Polyushkevich.pdf>.

АЛИНА ГАЛСТЯН

*Ереванский государственный университет,
Научный сотрудник н/и лаборатории психологии
личности и профессиональной деятельности*

ПСИХОЛОГИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ И ЗАЩИЩЕННОСТЬ ЛИЧНОСТИ В КОНТЕКСТЕ ПАССАЖИР-ТРАНСПОРТ

В статье представлены психологические проблемы безопасности, с точки зрения объективных и субъективных компонентов защищенности личности. Защищенность рассматривается как отсутствие угрозы, экстремальных ситуаций, которую возможно приобрести обеспечением надежности внешней среды и чувством внутреннего комфорта личности. В статье приведены результаты исследования безопасности в системе пассажир - транспорт .

Ключевые слова: психологическая безопасность, защищенность личности, угроза, экстремальная ситуация, транспортное средство.

ALINA GALSTYAN

*Yerevan State University,
The scientific and experimental laboratory
of psychology person and professional activity, researcher*

PSYCHOLOGICAL SAFETY AND SECURITY OF A PERSON IN THE CONTEXT OF PASSENGER - TRANSPORT

The article presents the problem of psychological security according to objective and subjective components of a person's safety. We consider safety as an absence of an emergency and danger which can be achieved by the interdependence of the sense of the inner comfort and the external trustworthy environment. The article includes research indicators of the questionnaire assessment of the passengers' safety and security in different transport modes which are interpreted from the perspective of trusting other passengers and drivers as well as of getting accessible information.

Keywords: psychological safety, security of the person, threat, extreme situation, vehicle.